

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ--ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Ժ Խ Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ

Կիրակի ՅՈՒՆՈՒԱՐ 30,1972 ԿԷՍՕՐԷՆ ԵՏՔ ԺԱՄԸ 4.00ԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ:

Եկեղեցւոյ ամէն մէկ անդամի պարտականութիւնն է ներկայ գտնուիլ ժողովին եւ իր շինիչ եւ օգտակար թելադրութիւններով նպաստել ժողովական աշխատանքներու յաջողութեան եւ եկեղեցւոյ բարոյական կեանքի բարգաւաճման:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- 1.- Ընտրութիւն Դիւանի:
- 2.- Զեկոյց Հոգեւոր Հովիւի
- 3.- Տեղեկագիր ծիսական Խորհուրդի ընդհանուր գործունէութեանց
- 4.- Տեղեկագիր Օժանդակ Մարմիններու
- 5.- Ընտրութիւն **ԺԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՉՈՐՍ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՀԱՇՈՒԽԵՔՆՆԻՉ ՅԱՆՉՆԱԽՈՒՄՔԻ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄՔԻ ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՔ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐՈՒ**
- 6.- Եկեղեցւոյ 1972 տարուան Դիւտճէն
- 7.- Նոր Հարցեր:

Յոլնուար 18,1972
Թորոնթօ, Գանատա

ԺԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ս.Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ

HOLY TRINITY ARMENIAN CHURCH OF TORONTO

PARISH ASSEMBLY

The Annual Parish Assembly of our church will take place on Sunday January 30,1972 at 4.00 P.M. in the parish hall. All paying members are urged to attend.

The agenda of the Assembly is as follows:

1. Registration
2. Election of Executive Committee
3. Annual Report of the Pastor
4. Annual Report of the Parish Council
5. Annual Report of the Auxiliary Bodies
6. Election of:
 - a) Four members for Parish Council
 - b) Auditing Committee
 - c) Nominating Committee
 - d) Diocesan Delegates
7. 1972 Budget
8. New Items

January 18,1972
Toronto, Canada

PARISH COUNCIL
Holy Trinity Armenian Church

Սիրելի անդամներ ծխական ժողովի,

Հայց. Առաքելական Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Տարեկան ծխական այս ժողովին, սիրով կ'ողջունենք Ձեզ, յանուն Ամերիկահայոց Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Ս. Արքեպսկ. Մանուկեանի:

Մեր սրտի խորերէն փառք կու տանք բարեաց պարգեւատու մեր Երկնաւոր Հօր, մեր հայրերու Աստուծոյն, որ շնորհաբար երբեք մեր սէրն ու նախանձախնդրութիւնը, եւ իբրեւ պարտաճանաչ եւ գիտակից զաւակներ Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ, այս տարի եւս ահա եկած ենք մեր Թանկագին ներկայութեամբ ապահովելու ծխական այս ժողովի աշխատանքներուն յաջողութիւնն ու Եկեղեցւոյ բարձր հեղինակութիւնը:

Արդարեւ, Հայց. Եկեղեցին ամէն բանէ առաջ հայկական Քրիստոնէական հաւատքի արտայայտութիւնն է, զոր ներշնչեր է մեզ Ս. Աւետարանի վճիտ պատգամներով ապրելու, իրագործելու համար Աստուծոյ Թագաւորութիւնը մեր այս անցաւոր կեանքին ընթացքին: Մեր հաւատաւոր ու բարեպաշտ նախնիք հոգիի բարձր ներշնչումներով ապրեր են իրենց հայու քրիստոնէական հաւատքը եւ իրենց գործնական բարեպաշտութեան զօրաւոր ապացոյցը, իբրեւ չհատնող հարստութիւն կտակեր են մեզ՝ գալիք սերունդներուս: Մեր ժողովուրդի քրիստոնէական հաւատքի ողջ պատմութիւնը, պատմութիւնն է հայու արիւնով զրուած սուրբ եւ նուիրական յիշատակարանի մը, որ սեպուհի պարտականութիւնն ունինք անեղծ պահելու կեանքի ինչ ինչ դժուարութիւններու եւ փոթորիկներու մէջէն:

Հայու այդ քրիստոնէական հաւատքի գործնական բարեպաշտութեան ապացոյցը գտեր ենք այստեղ, Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ կամարներուն տակ, եւ եկած ենք ահա զայն աւելի եւս բարգաւաճ ու կենսունակ դարձնելու սիրոյ, համերաշխութեան եւ կամաւոր զոհողութեան ոգիով:

Ս. Երրորդութիւն Եկեղեցին, իբրեւ Թորոնթոյի հայուն կողմէ կառուցուած Աստուծոյ եւ Աղօթքի Տուն, կոչուած է ամէն բանէ առաջ կրօնաբոյր եւ հոգեպարար մթնոլորտ մը տալ հայ բարեպաշտ հոգիներուն, անոնց հոգիներուն ազնուացման եւ զօրացման համար: Ծնորհակալ ենք Աստուծոյ, որ մեզի պարգեւեր է այնպիսի ազնիւ եւ ջերմեռանդ հոգիներ, որոնք Եկեղեցւոյս Դպրաց Դասի միջոցաւ, ղեկավարութեամբ Դպրապետ Տիար Արթօ Գալուքեանի, գնահատելի ճշդապահութեամբ իրենց կամաւոր ծառայութիւնը կը նուիրեն ներդաշնակ երգեցողութեամբ Եկեղեցւոյ՝ Աստուծոյ այս Տան պայծառութեան: Ուրախ ենք որ անցեալ նոյեմբերին, Առաջնորդ Ս. Հօր հոգեպարար շնորհաբաշխութեամբ Եկեղեցւոյս երկարամեայ Ուրարակիւր դպիրներէն Բարեշնորհ Վարդան Վարդանեան արժանացաւ Եկեղեցւոյ նուիրապետութեան Սարկաւազի աստիճանին, ստանձնելով իր աստիճանին լրիւ իրաւասութիւնները: Բարեշնորհ Վարդան Սարկաւազ Վարդանեանի սէրն ու նուիրումը Եկեղեցւոյս աւելի քան տասնըվեց տարիներէ ի վեր, նախ որպէս Տնօրէնը եւ Վարիչը Կիրակնօրեայ եւ Հայ Դպրոցներուն, Եկեղեցւոյս զանազան

մշակութային ձեռնարկներու յանձնախուժութիւն մէջ իր բերած գնահատելի մասնակցութիւնը, եւ իր գիտակից եւ նուիրեալ ծառայութիւնը Ս.Սեղանի սպասարկութեան, իր մէջ յայտնած են անշահախնդիր ու տիպար զաւակը Հայց.Առաք.Ս.Եկեղեցւոյ: Ուրախ ենք նաեւ նոյն առիթով Առաջնորդ Ս.Հայրը Կիսասարկաւագութեան աստիճան շնորհեց եկեղեցւոյս Ուրարակիրներէն Արամ Անմահունիին եւ Սարգիս Պալեանին: Կը հայցենք բոլորին Աստուածային օրհնութիւն եւ հոգեկան գոհունակութիւն իրենց կատարած ծառայութիւններուն փոխարէն:

Եկեղեցւոյ մը կեանքին տեւականացման կարեւոր եւ հիմնական ազդակն է կրօնական դաստիարակութիւնը: Եկեղեցւոյս անդամներէն Տիարք Տիգրան Դազարեանի եւ Երուանդ Զուլճեանի ջանքով եւ զոհողութեամբ Կիրակնօրեայ Դպրոցը կը շարունակէ իր գոյութիւնը ամէն Կիրակի Եկեղեցի, Աստուծոյ Տունը, պաշտամունքին ներկայ գտնուող բարեպաշտ ծնողներու սիրասուն զաւակներուն համար: Նաեւ գոհունակութիւնը ունինք ողջմտութիւնն ու նախանձախնդրութիւնը, որոնք հաւաքական մասնակցութեամբ Մեծ Պահոց Կրօնագիտական Դասընթացքին, Օրօրայի մէջ, նոր խանդ ու նոանդ յառաջացուցին երիտասարդութեան մօտ, աւելի գիտակից պատասխանատուութեամբ մօտենալու մեր հոգեւոր եւ կրօնական ժառանգութեան:

Յուշիս ամսուան, Ամերիկայի Միացեալ Նահանգներէն հոգեւոր առաքելութեան նպատակով մեր համայնքին այցելութիւն մը տուին Հ.Ե.Ե.Ա.Ի Կեդրոնական Վարչութենէն նշանակուած չորս անձեր, գլխաւորութեամբ Սփրինկֆիլտի Հոգեւոր Հովիւ Արժ.Տ.Ներսէս Քհնյ.Ճէպէճեանի: Անոնք ամբողջ Շաբաթ մը գտնուեցան մեր մէջ, այցելեցին հիւանդներու, ընտանիքներու, եւ զրոյցներ ունեցան Հ.Ե.Ե.Ա.Ի անդամներուն հետ, մեր եկեղեցւոյ ներկայի եւ սպագայի ազգային եկեղեցական հարցերու շուրջ:

Նոյեմբեր ամսուան, Առաջնորդ Ս.Հօր յանձնառութեամբ եւ հրահանգով եւ իր բարձր նախագահութեամբ, Յոբելինական շքեղ հանդիսութեամբ նշեցինք Ամերիկահայոց նախկին Առաջնորդ Երանաշնորհ Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանցի ծննդեան հարիւրամեակը:

Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներուն մեր տարեկան արձակուրդին առիթով, ծխական խորհուրդիս բարեհաճ կարգադրութեամբ եւ Առաջնորդ Ս.Հօր արտօնութեամբ, մեր հայ հոգեւորականի ուխտը կատարեցինք Մայր Աթոռ Ս.Էջմիածնի իջման Սուրբ Սեղանին առջեւ, եւ մեր կենդանի աչքերով ողջունեցինք բազում տառապանքներէն եւ արհավիրքներէն վերածնուած եւ միշտ բարգաւաճող ամենայն հայոց մայր Հայրենիքը: Ամենայն հայոց Հայրապետ Ն.Ս.Օծուծիւն Տ.Տ.Վազգէն Ա.Կթղ.Ի հայրական հոգածութեամբ աւելի քան ամիս մը հիւրասիրուեցանք Մայր Աթոռի մայրավանքին մէջ: Այցելեցինք Հայաստանի պատմական յուշանձաններն ու տեսարժան վայրերը: Սեպտեմբեր 26-ին Վարագայ Ս.Խաչի տօնին առիթով պատարագեցինք եւ քարոզեցինք Ս.Էջմիածնի Մայր Տաճարին մէջ եւ Վեհափառ Հայրապետի շնորհաբաշխ ներկայութեան հաղորդեցինք Թորոնթոյի Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ

հաւատացեալ ժողովուրդին սէրն ու հաւատարմութիւնը դէպի Մայր Աթոռ Ս.Շրմիածնին եւ անոր առաքինագարդ Վեհափառ Հայրապետին:

Շնորհիւ Վեհափառ Հայրապետի բարձր հեղինակութեան Հայց.Եկեղեցին կը շարունակէ իր սրբազան առաքելութիւնը եւ հայրենի պետական իշխանութեանց շրջահայեաց վերաբերմունքով միշտ բարձր կը պահուի Ս.Շրմիածնի աւանդական հմայքը:

Այսօր, իբրեւ Գանատահայեր, եւ զաւակներ Հայց.Առաք.Ս.Եկեղեցւոյ Մայր Աթոռ Ս.Շրմիածնին, առաւել սիրով եւ գուրգուրանքով պարտինք փարիւ Սուրբ Շրմիածնին, եւ Ս.Շրմիածինով վերածնուած Հայրենիքին: Եկեղեցական խումբերով ուխտագնացութիւններ դէպի Ս.Շրմիածին եւ Հայաստան, մեծ տպաւորութիւն կրնան ձգել Ս.Շրմիածնի պատմական դերին ու վարկին:

Մեր անդրանիկ ուխտագնացութեան առիթով պարտք կը զգանք մեր անկեղծ երախտագիտութիւնը յայտնել Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ հիմնադիր անդամներէն ծխական խորհուրդի պատուոյ Ատենադպիր Մեծարգոյ Սեղրակ Ատուրեանի որուն վեհանձն ու բարոյական քաջալերութիւնը, ինչպէս նաեւ պատուարժան ծխական խորհուրդի, Եկեղեցասէր Տիկնանց Միութեան Վարչութեան եւ այն բոլոր ազնիւ հոգիներուն, որոնք իրենց քաջալերութիւններով եւ սրտաբուխ նուէրներով մեզ արժանացուցին մեր նուիրական ուխտը կատարելու սրտազին բաղձանքին: Թող Բարձրեալն Աստուած անփորձ պահէ զիրենք, եւ իրենց ձեռքերուն գործերը յաջողութեամբ պսակէ:

Հայց.Եկեղեցւոյ հոգեւոր ծառայութեան ճամբուն վրայ հանգրուան մըն էր Թորոնթոյի Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ հոգեւոր հովուութեան մեր պաշտօնավարութեան տասներորդ տարեդարձի յիշատակումը անակնկալ իրադրութեան մէջ, պատուարժան ծխական խորհուրդի ազնիւ կարգադրութեամբ: Մենք պիտի շարունակենք մեր ծառայութիւնը ի սպաս դնել ապաւինելով նախ Աստուծոյ օգնականութեան եւ ապա մեր բարեպաշտ ժողովուրդին հոգեւոր գործակցութեան:

Այս հանդիսաւոր առիթով երախտագիտութեան խօսք ունինք նաեւ բոլոր անոնց, որոնք իրենց ժամանակը, տաղանդը եւ դրամը զոհեցին Աստուծոյ այս հոգեւոր տան պայծառութեան ու բարգաւաճման համար: Առանց ծխական խորհուրդի վերին հսկողութեան եւ եկեղեցապատկան մարմիններու եւ կազմակերպութեանց շինարար գործակցութեան ոգիին, հազիւ թէ իրագործէինք, մեզի վիճակուած պատասխանատուութիւնները:

Սրտանց կ'աղօթենք որ Աստուած բարձրացնէ հայ ժողովուրդին հաւատքը, արդիւնաւորէ բոլոր բարեգործական ու կրթական մարմինները, օրհնէ հայ ընտանիքը, որպէսզի առաքինութեամբ լեցուած, սիրոյ ճոխութեամբ հարստացած եւ արդարութեան պտուղներով զօրացած, ապրինք քրիստոնէական մեր կեանքը անփորձ եւ անխոով.ամէն:

Յաջողութիւն այս ժողովին եւ օրհնութիւն Ձեր բոլորին:

ԱՅՑԵԼՈՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ

1. Յուևվար 4-7, Հայկական Ս. ծննդեան առիթով.-
Ամենապատիւ Տ. Շնորհք Ս. Արքեպիսկոպոս Գալուստեան, Պատրիարք Հայոց
Թիւրքիոյ, Գերշ. Տ. Վաչէ Ս. Եպսկ. Յովսէփեան, Առաջնորդի Փոխանորդ
Գանատայի համայնքներուն, Հոգշ. Տ. Արշէն Վրդ. Այվազեան, Գաւազանակիր
Ս. Պատրիարք Հօր:
 2. Մարտ 19-21, Մեծ Պահոց Օրօրայի Կրօնագիտական Դասընթացքին առիթով.-
Հոգշ. Տ. Օշական Վրդ. Մինասեան, Պոսթոնէն, Բարեշն. Յովհաննէս Սրկ.
Գասպարեան, Նիւ Եորքէն:
 - 3.- Մայիս 8-17,
Մայր Աթոռ Ս. Էջմիածինէն Արժանաշնորհ Տ. Յովհաննէս Քհնյ. Դանիէլեան
եւ Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Գարակէօզեան:
 - 4.- Յուլիս 1-8,
Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Ճէպէճեան, Սփրինկֆիլտէն, Մեսս.:
 - 5.- Օգոստ. 27-31
Հոգշ. Տ. Թշական Վրդ. Միասեան;
 - 6.- Սեպտ. 26,
Հոգշ. Տ. Փառէն Վրդ. Աւետիքեան, Տիթրոյթէն:
 - 7.- Հոկտ. 6-11
Հոգշ. Տ. Մեսրոպ ծայրագոյն Վրդ. Սէմէրճեան, Հարթֆրտէն:
 - 8.- Նոյեմբեր 12-16,
Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Ս. Արք. Մանուկեան:
 - 9.- Սեպտ. 14-Հոկտ. 17
Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Պապուրեան, Նիակարա ֆոլգէն, Կովիլի բացակայութեան
խորհրդակատարութիւններ կատարած է Ս. Եկեղեցւոյս մէջ:
-

TORONTO, CANADA
ARMENIAN HOLY TRINITY CHURCH
1971 ANNUAL REPORTS

PARISH COUNCIL CHAIRMAN'S REPORT

The following summary reports on the general Parish activities together with the reports of auxiliary organizations functioning under the general supervision of the Parish Council are submitted to the dues-paying members of our Church for their general information. At the conclusion of this report, we will be pleased to provide detailed information if required.

The Parish Council consists of nine members under the Presidency of the Pastor. Hence, nine specific positions within the Council have been identified that require the full attention and participation of the members for the efficient operation of the Parish Council and, thus, of the Church.

At the end of the year, the following was the line up of positions held in the Parish Council:

Chairman	:	B. KHOJAJIAN
Vice-Chairman	:	E. DOVLETIAN
Secretary	:	J. YERETSIAN
Building-Use Manager:	:	" "
Treasurer	:	H. ARTINIAN
Assistant-Treasurer	:	S. SEMERDJIAN
Maintenance Manager	:	A. BALTAYAN
Programme Manager	:	H. AMPAGOUMIAN
ACYOA Liaison Officer:	:	L. KHOSROVIAN
Armenian School	:	A. BALTAYAN
Liaison Officer	:	N. KASSABIAN

It is in the best interests of the Church and the Community that the members of the Annual Parish Assembly as well as the Nominating Committee consider the positions prevalent on the Parish Council during the elections for that body.

MEETINGS: The Parish Council met 25 times during the year, normally once every two weeks.

CHURCH SERVICES: With the exception of 3 Sundays, Church Services were held every Sunday throughout the year. The Pastor, Rev. J. Tashjian, was away on a special vacation from September 13th to October 22nd, 1971 to Armenia, Jerusalem and his native Lebanon. During his absence of 5 Sundays, Church Services were held by Rev. P. Avedikian of Detroit on September 26th and by Rev. M. Semerjian of Connecticut on October 10th. These two clergymen as well as Rev. Nerses Baboorian of Niagara Falls provided emergency services during the Pastor's absence.

During 1971 the following services were provided:

42 Christenings
25 Marriages
3 Burials
70 Requiem Masses
108 House Blessings

Cultural & Religious Programmes:

- Aurora Religious Conference on March 21st for the ACYOA.
The Parish Council contributed about \$500 to this conference.
- Martyrs Day was observed once again under our auspices with the participation of the A.E.C., the A.G.B.U., the A.D.L. and the A.R.F.
- Centennial celebrations were held for Catholicos Karekin Hovsepiants on November 13th.
- A Special Church Service was held on January 27, 1972, so that some 80 students from University of Toronto, the York University and the Centre for Christian Studies can acquaint themselves with our rites in pursuit of their religion courses. A reception was held for them later in the Parish Hall.

SOCIAL PROGRAMMES :

- The Annual Parish Picnic was held at the Highland Creek Park, unfortunately interrupted by heavy storms.
- + A Banquet was held on November 14th in honour of the Primate but also, especially, to celebrate the 10th anniversary of Rev. Tashjian's Pastoral duty in our Parish.
- The 18th Church Anniversary Ball was held on December 4th with the co-operation of the Ladies' Auxiliary and the ACYOA.
- The Parish Council organized a dinner on January 23/72 in honour of the Executive of the Ladies' Auxiliary, the Choir and the deacons for their long service.

THE PRIMATE'S VISIT: We had the pleasure of having the Primate, Archbishop Torkom Manoogian, visit our Parish for 4 days - November 12, 13, 14 and 15. During his visit he met with the Executive of all Church organizations and he devoted one additional evening for an informal talk with the youth of the community. The Primate presided over the Centennial celebrations of Catholicos Hovsepiants. On Sunday, November 14th, he ordained Vartan Vartanian a Deacon upon the recommendation of the Parish Council for his long and devoted service at the altar.

ARMENIAN TELEPHONE DIRECTORY: This biennial publication is due to be on sale very soon. So far advertisements have covered the cost of the Telephone Book.

RELIGIOUS COURSES: Due to the poor attendance at the Sunday School which was diagnosed as a transportation problem, Armenian School Trustees were directed to add a religious programme to their curriculum. We understand the programme is to get underway soon.

MAINTENANCE: During the week prior to Armenian Christmas 1972, the Church Hallway and the washrooms were painted. Also for the first time since the consecration of the Church, all of 18 years, the Church pews were sanded and cleaned.

DIOCESAN DUES: During 1971 our Diocesan Dues went up by ~~150%~~ 65% due to a new taxation formula adopted by the Diocesan Council and then the Assembly. In addition, at the end of 1971, the Diocese faced a financial crisis whereupon parishes were levied surcharges in addition to their annual taxes. Our share came to \$1300 but does not appear in the 1971 Financial Statement because it was paid out in January, 1972.

TOTAL CASH ASSETS BY DECEMBER 31, 1971 = \$23,700.

COMMITTEES: A permanent entertainment committee as previously instituted by Parish Councils was discarded by this Council. Instead, we believe it is better to involve as many of our dues-paying members as possible on committees for various programmes under the permanent chairmanship of a Council member.

I would like to thank all those who willingly throughout the year, extended their co-operation to the Parish Council whether they were on other executives or just devoted parishioners.

LADIES' AUXILIARY

Chairman : Mrs. H. AFARIAN
Secretary : Mrs. CH. ARTINIAN
Treasurer : Mrs. M. AYNACYAN

MEETINGS: Five Membership Meetings and ten Executive Committee Meetings were held during the year.

MEMBERSHIP: There are 89 registered members.

ACTIVITIES:

MARCH 21: Lenton Dinner
APRIL 11: Easter Egg-Cracking Party
APRIL 25: Madagh Dinner
MAY 8: Bake Sale
SEPT. 20: Tea Party
OCT. 5: French "Gallopig Gourmet"
OCT.16-17: Annual Bazaar
OCT. 30: Annual Dance at Seaway Towers
NOV. 7: Dinner Party

The Executive Committee Members of the Ladies Auxiliary express their thanks to Diramair Tashjian for the washing and ironing of the Altar cloths and for the preparation of Mass every Sunday, to Mr. H. Davidian for the laundering of the table clothes of the Parish Hall and to all their supporters in the Community.

FINANCIAL:

Cash in Bank Jan.1, 1971	\$ 289.54
Net Income	<u>4,484.71</u>
Total	\$4774.25
Bank Service Charges	16.40
Transfer to Parish Treasury	4500.00
Cash Balance Dec.31/71	<u>\$ 257.85</u>

A. C. Y. O. A. FINANCIAL REPORT -- 1971

EXPENSES

New Year's Eve Ball December 31, 1970-----	\$ 1,245.77
ACYOA Day April 4, 1971-----	143.63
Mission Week-----	305.42
ACYOA 25th Anniversary Ball-----	1,929.08
Donations-----	522.06
Postage Stamps-----	112.00
Dance Parties-----	445.01
Bus Trips	783.00
Movies	94.78
Liquor Licences	50.00
Stationery	101.12
Sports Supplies & Equipment	83.42
Miscellaneous-----	268.77
Net Total	<u>\$ 6,084.06</u>

INCOME

Forward From December 31, 1970-----	\$	979.10
New Year's Eve Ball December 31, 1970-----		2,190.65
ACYOA Day April 4, 1971-----		323.45
ACYOA 25th Anniversary Ball-----		2,199.85
Movie Nights-----		73.70
Donations-----		205.00
Membership Dues-----		95.00
Dance Parties-----		532.95
Bus Trips-----		685.50
Miscellaneous-----		24.10
	Net Total	<u>\$ 7,309.30</u>
	NET SURPLUS FOR 1971	<u>\$ 1,225.24</u>

ST. SAHAG & ST. MESROB
ARMENIAN SCHOOL
Statement of Revenue & Expenditure
For the Period Aug.13- Dec.31/71

REVENUE:

School Fund		\$ 1,000.00
Ladies' Auxiliary	\$1,125.00	
Tuition	4,140.00	
Donations	<u>55.00</u>	5,320.00
Interest Income - Bank a/c		4.28
Total Revenue		<u>\$ 6,324.28</u>

EXPENDITURE:

School Rental Charges	295.00	
Bus Rental Charges	2,033.50	
Insurance	48.00	
Gifts to Teaching Staff	57.00	
Stationery & Books	162.75	
Miscellaneous Expenses	<u>323.39</u>	
Total Expenditure	\$ 2,919.64	(2,919.64)
Cash in Bank as of December 31, 1971		<u>\$ 3,404.64</u>

CHURCH CHOIR

The Choir of Holy Trinity Armenian Church consists of approximately 25 members, directed by Mr. Arto Cavoukian and assisted by Mrs. Araxi Kassardjian, Organist.

The elected members of the committee are:

Chairman	:	A. SELYAN
Vice-Chairman	:	J. YERAMIAN
Treasurer	:	J. KASSARDJIAN
Corresponding Secretary:		T. EVRIGIAN
Recording Secretary	:	L. TASHJIAN (Miss)

On January 6th, 1971, we had the pleasure of performing in the first Christmas Badarak with the Patriark of Istambul officiating. The Choir has taken part in every important musical function that was presented this year in our community. The Choir again took part in the annual concert of Christmas music at the Town Hall, St. Lawrence Centre for the Arts. On January 2nd, the Choir took part in a concert at Renforth Baptist Church in Etobicoke. Both were well received.

The Choir, under the leadership of Mr. Cavoukian and supported by members of the Armenian Evangelical Church and singers from our community, took part in a Memorial Service for Karegeen Catholicos Hovsepian at Seneca College on Finch Avenue. The Choir association sent one member to St. Nerses Seminar in Illinois this summer. Two delegates were elected and sent to the 25th Annual Church Choir Assembly in Worcester, Mass.

We thank God for the strength to have been able to serve our church in the past and with the grace of God, promise to serve the needs of our church in the coming year.

SUNDAY SCHOOL

In 1971, Sunday School was held regularly from 10:45 to 12:00 every Sunday morning during Church Service.

The Summer shut-down started together with the St. Sahag & St. Mesrob Armenian School and resumed end of November 1971 with the consent of Rev. J. Tashjian. Attendance has been an average of 12-15 pupils for 1971; at present, we find the Sunday School hall kept exceptionally clean and tidy; we thank the Parish Council for their concern.

SUNDAY SCHOOL (Cont;d)

A committee was formed at the end of 1970 as trustees for Sunday School Management, certain members of this committee with the help of Miss A. Mangelikian, Miss Mouslian, Mr. V. Kerim, Mr. Shahan Deirmendjian were engaged in teaching.

Material taught was old and new Testament stories of the "ASTVADZASHOUNCH" and their relations to everyday life. Prayer and songs were also taught and stories wherever possible were shown on film strips.

The committee mentioned above has not yet been formed after the summer holidays of 1971.

Mr. Y. Tchouldjian and myself are teaching Sunday School at the present time and Mr. Y. Tchouldjian is treasurer.

FINANCIAL STATEMENT

Cash in Bank on January, 1, 1971	\$ 245.32
Cash on Hand	18.51
Student Offerings during 1971	<u>44.87</u>
	\$ 308.70
Expenses during 1971	<u>59.58</u>
	\$ 249.12
Cash in Bank on December 31, 1971	241.87
Cash on Hand	<u>7.25</u>
<u>NOR SEROUNT</u>	\$ 249.12

NOR SEROUNT was published 8 times in 1971. Circulation 300 copies, including copies outside Canada; however only 110 paid subscribers, are on the list.

Balance January 1, 1971	\$ 762.24
Income	520.45
Expenses	<u>451.37</u>
Balance Dec.31/71	<u>\$ 831.32</u>

The Staff of NOR SEROUNT at present consists of the following:.

English Editor	: S. TCHILINGIRIAN
Armenian Editor	: H. SHISHMANIAN
Publisher	: V. SALIBIAN
Treasurer	: N. BALTAYAN
Assistant Armenian Editor	: A. MAMOURIAN
Armenian News Editor	: M. B. MAMOURIAN
Circulation Director	: E. KHOUNGANIAN
Assistant Circular Director:	S. KARABULUT
Typists	: E. ARTIN/L. KHOUNGANIAN

In the Fall of 1971, Staff changes took place on NOR SEROUNT. The English Editor, Mr. Haig Selyan, after a long devoted service unfortunately resigned due to differences of opinion with the Parish Council. Furthermore, Mr. Jirayr Yeretsian, the long-time reporter of Nor Serount resigned also due to his heavy load on the Parish Council.

ARMENIAN SCHOOL

The Executive of the Armenian School has its members appointed for a term of two years by the Parish Council. The members elect their officers from among their ranks.

The present Executive consists of the following:

Chairman	:	H. SHISHMANIAN
Vice-Chairman:	J. SHANLIAN	
Secretary	:	A. MATOSSIAN (Mrs.)
Treasurer	:	L. YAZEDJIAN
Advisors	:	Z. NERJIVANIAN, B. AMPAGOUMIAN, N. TOSSOUNIAN, H. HATSOONY.

Principal of the Elementary School: E. BARONIKIAN
Principal of the Kindergarten : A.YAZEDJIAN (Mrs.)

The Elementary School has 11 teachers.
The Kindergarten has 3 teachers.
In addition to the above there are 8 teachers on reserve for emergency replacements.

The school year began on September 18, 1971. Classes are held every Saturday in the Overland Drive Public School (Don Mills) in North York from 9:00 a.m. to 1:00 p.m. 11 Classrooms and the gymnasium of the Public School are used for our purposes.

The student body consists of 178 pupils.

The school concentrates on the teaching of the Armenian language, Armenian history and Armenian songs and dances. Further to instructions from the Parish Council, a religious course will be added to the curriculum soon.

For the sake of good public relations, the Principal of the Overland Drive Public School, Mr. PLETCH, was invited to meet the teachers of the Armenian School and at the same time visit the classrooms.

ACYOA ACTIVITIES

The ACYOA Executive consists of the following:

Chairman:	E. KARADJIAN
Vice-Chairman:	K. KOKORIAN
Recording Secretary:	M. MAMOURIAN
Corresponding Secretary:	S. KARADJIAN (Mrs.)
Treasurer:	V. KARABULUT
Assistant Treasurer:	S. SVADJIBASHIAN (Miss)
Publicity:	L. KAISERLIAN (Miss)
Advisors :	E. KHOUNGANIAN
	M. MENJOLIAN (Miss)

MEETINGS: 32 Executive meetings, 3 General Meetings and 1 joint meeting with all church organizations were held during the year.

ACTIVITIES: The following activities were held throughout the year.

- "Valentine's Day" Dance, February 12th.
- Aurora Religious Conference, March 19-21. 23 members attended.
- Took part in the AGAU Basket-Ball Tournament in Hamilton.
- Movie Night, March 28th. Film - "Barabas".
- ACYOA Day: Dinner, cultural programme and a one-act play, April 4th.
- "Marathon Dance", May 28th.
- Members' Dance, June 21st.
- Youth Picnic to Sibbald Point, June 27th.
- Meeting with ACYOA Mission, July 5th.
- Montreal and Toronto ACYOA joint picnic in Kingston, August 22nd.
- ACYOA 25th Anniversary Ball in Casa-Loma, August 28th.
- New Executive elections, October 3rd.
- Members' Social, December 25th.
- New Year's Eve Ball, December 31st.

GENERAL: The ACYOA has Ping-Pong and Bowling tournaments underway.

The Executive has fully co-operated with the Parish Council and helped in their programmes. We would like to thank the Parish Council in return for their support and general encouragement of the ACYOA Executive.

HOLY TRINITY ARMENIAN CHURCH PROJECTED BUDGET

1 9 7 2

RECEIPTS:

Parish Dues	\$ 6,000
Plate & Box Collections	5,000
Donation	12,000
General Affairs	7,000
Ceremonies	4,400
Bank Interest	600
	<hr/>
	\$ 35,000
	<hr/> <hr/>

DISBURSEMENTS:

Pastor's Stipend	\$ 7,920
OHSIP + Pension + Unemployment Ins.	390
Diocesan Dues	4,300
Heat, Light, Water & Telephone	2,000
Maintenance - Church Supplies	5,000
General Affairs	2,500
Office Expenses	1,500
Contingencies	2,500
Surplus	5,890
	<hr/>
	\$ 35,000
	<hr/> <hr/>

BK/amp
January 30, 1972.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՍՍՀԱԿ ԵՒ ՍՄԵՍՐՈՊ ԱԶԳ.ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐ 31, 1971

Ծխական խորհուրդիդ կողմէ նշանակեալ, Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգ. Վարժարանի Խնամակալութիւնս երկամեայ իր նստաշրջանի դիւանը կազմեց հետեւեալ ձեւով, զաղտնի բուէարկութեամբ, անդրանիկ նիստի ընթացքին:

Նախագահ Հոգ2. Տ. Ժիրայր Վրդ. Թաշճեան

- Տիար Հրաչ Շիշմանեան -- Ատենապետ
- Տիար Ժոզէֆ Շանյեան -- փոխ Ատենապետ
- Տիկ. Անահիտ Մաթոսեան -- Ատենադպրուհի
- Տիար Լեւոն Եազրճեան -- Գանձապահ
- Տիար Զարեհ Ներժիվանեան -- Խորհրդական
- Տիար Բենիամին Ամբակումեան 222
- Տիար Նուպար Թօսունեան 222
- Տիար Յարութիւն Հացունի 222
- Տիար Երուանդ Զուլճեան 222

Տիար Երուանդ Զուլճեանի հրաժարումով, Խնամակալութիւնս ցարդ կը գործէ իր ութ անդամներով:

Անմիջական յաջորդող նիստերուն, Խնամակալութիւնս Զանազ Վարժ. շուրջ կորզել կարող անհատներէ կազմուած Տնօրէնութիւն մը եւ ուսուցչական կազմ ու ձեռնարկեց վերամուտի նախապատրաստական աշխատանքներուն:

Հաճոյքով կը տեղեկացնենք թէ, նման, անցնող տարեշրջանին, այս տարի եւս դասաւանդութիւնները կը կատարուին նորժ ԵՕՐԲ Կրթական Տնօրէնութեան տրամադրած վարժարաններէն միւսն մէջ որ է, ՕՎԸՐԼԱՍՏ ՏՐԱՅՎ վարժ. ուր կը գործածենք վարժարանի 11 դասարանները ու մարզավայրը, առաւօտեան ժամը 9էն մինչեւ կ.վ. 1,00: Վարժարանիս վերամուտը տեղի ունեցաւ Սեպտ. 18ին, Շաբաթ, առաւօտեան ժամը 10ին, երկսեռ աշակերտութեան ներկայութեամբ որոնց թիւը այժմ հասած է 178ի. բաժնուած Մանկապարտէզի 2 դասարաններու եւ նախակրթարանի 7 դասարաններուն միջեւ:

Այս տարի Վարժարանես ներս կը դասաւանդէն 20 նուիրեալ ուսուցիչներ, իրենց կողքին ունենալով 8 փոխարինողներ. որոնք կը կատարէն հայ մանուկներու դաստիարակութեան դժուարին պարտականութիւնը, սիրայօժար, առանց որեւէ նիւթական վարձատրութեան:

Ուսուցչական կազմը կը բաղկանայ հետեւեալներէն. -

Մանկապարտէզ: -

- Տիկ. Արփի Եազրճեան - Մանկապարտիզպանուհի
- Օրդ. Սոֆի Թովմասեան
- Օրդ. Ալիծ Գասարճեան
- Օրդ. Անոյշ Փափագեան.

Պախակրթարան: -

- Տիար Եղուարդ Պարոնիկեան - Տնօրէն
- Տիկ. Արփի Մերաս
- Տիկ. Ազնիւ Պաղտատեան
- Տիկ. Սեղա Նիկողոսեան
- Տիկ. Երջանիկ Զեօմէլէքճեան

Տիկ. Վերժին Հէքիմեան
Օրդ. Լենա Թաշճեան
Օրդ. Ժանէթ Հանջէրեան
Օրդ. Անի Հպուլքճեան
Օրդ. Մատլէն Մուշեան
Օրդ. Բիթա Մարգարեան
Տիար Ներսես Տէր Մարգարեան

Անգնող նոյեմբեր ամսուայ ընթացքին Վարժարանս այցելեցին Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Սրբգ. Հայրը, ընկերակցութեամբ ծխական Խորհուրդի անդամներուն, ուր Սրբգ. Հայրը ծանօթացաւ ուսուցչական կազմի անդամներուն եւ իր հայրական օրհնութիւնները տուաւ աշակերտութեան: Նաեւ Մոնթ. Տոքթ. Գէորգ Պաղճեան եւ Նիւ Եօրքէն Հ. Բ. Ը. Մ. կատարողական արուեստի տնօրէն Տիար Սարգիս Փասքալեան: Ստեղծելու համար սիրալիր փոխարարներութիւն եւ իրերահասկացողական ոգի, խնամակալութեանս հրաւերով վարժարանիս ուսուցչական կազմին հետ հանդիպում մը ունեցաւ Օվորլանտ Տրրայվ վարժ. Տնօրէն Պր. Փլէթճճ ապա ան այցելեց բոլոր դասարանները եւ մօտէն ծանօթացաւ դասընթացքներու ընդմիջին:

Ծխական Խորհուրդիդ առաջարկին ընդառաջելով խնամակալութիւնս որոշեց վարժարանէն ներս հաստատել Կրօնա-Բարոյագիտական դասընթացք, Հայերէն լեզուի, Հայց. Պատմութեան, Հայկ. Նրգի եւ Պարի կողքին. գորս պիտի սկսինք դասաւանդել յետ ամանորի արձակուրդին: Դեկտ. 18ին կազմակերպուեցաւ նաեւ Վարժ. աշակերտութեան աւանդական Ամանորի հանդիսութիւնը:

Վերոյիշեալ տեղեկագրէն եւ կցեալ նիւթական հաշուէկշռէն երբ ի յայտ կու գայ որ Վարժարանս ներկայիս ունի կանոնաւոր ընթացք եւ յարաբերաբար ինքնաբաւ գոյավիճակ. կը սիրենք յիշել թէ տակաւին առեւել ջափով ալ անհրաժեշտութիւնը ունինք համայնքիս ամէն մէկ անհատի բարոյական եւ նիւթական գոհողութիւններուն. որպէսզի բոլորիս սիրելի այս հաստատութիւնը հաստատաբայլ կատարէ նաեւ գալիք սերունդներու դաստիարակութիւնը եւ պահպանումը:

Լիալոյս ենք նաեւ որ ինչպէս անցեալին, յետ այսու եւս պիտի վայելենք ծխական Խորհուրդիդ Բարոյական եւ Նիւթական աջակցութիւնը:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

Եկեղեց ասէր Տիկնանց Միուլթեան փարչ. կը բաղկանայ 10 անդամներէ որոնք են:-

Պատուոյ Ատենապետուհի Տիկ. Հէլէն Ունճեան

- Տիկ. Յասմիկ Աֆարեան - Ատենապետուհի
- Տիկ. Շաքէ Յովհաննէսեան - փոխ-Ատենապետուհի
- Տիկ. Շաքէ Արթինեան - Ատենաղապրուհի
- Տիկ. Մատլէն Այնճեան - Գանձապահուհի
- Տիկ. Պերճուհի Փափազեան - փոխ-Գանձապահուհի
- Օրդ. Մէրի Փոլատեան - Թղթց. քարտուղարուհի
- Տիկ. Սիրուն Համամճեան - Խրհրդական
- Տիկ. Թագուհի Նէնճուլեան - ,,
- Տիկ. Աննա Փարաղամեան - ,,

Ունինք 89 անդամուհիներ.

Միուլթիւնս այս տարուայ ընթացքին ունեցած է հինգ ընդհանուր եւ 10 վարչական ժողովներ:

Ձեռնարկներ.-

- 1- Մեծ Պահքի ծաշ Կիրակի 21 Մարտ 1971
- 2- Ս. Զատիկուայ հաւկթախողի երեկոյթ Կիրակի 11 Ապրիլ 1971
- 3- Ապրիլեան Նահատակաց Օրուայ նատողի ծաշ Կիրակի 25 Ապրիլ.
- 4- Անուշեղէնի վաճառքի երեկոյ Շաբաթ 8 Մայիս 1971
- 5- Թէյասեղան, Երկշբ. 20 Սեպտեմբեր 1971:
- 6- Ֆրանսական կարկանդակի պատրաստութեան ցուցադրութիւն Երեքշաբթի 5 Հոկտ. 1971
- 7- Տարեկան Պագար 16-17 Հոկտեմբեր 1971:
- 8- Տարեկան Կարահանդէսը շաբաթ 30 Հոկտ. Սիվէյ Պանդոկին մէջ:
- 9- Ճաշկերոյթ Կիրակի 7 Նոյեմբեր 1971:

Միուլթեանս Կարչուլթիւնը իր խորհին շնորհակալութիւնը կը յայտնէ Տիրամայր Ա. Թաշճեանին Ս. Սեղանի ծածկոցներու մաքրութեան իր տարած աշխատանքին եւ ամէն Կիրակի Ս. Պատարագի Մաս-ի պատրաստութեան համար. եւ Պր. Յ. Դաւիթեանին ծաշի սեղանի ծածկոցներու մաքրութեան համար, եւ բոլոր անոնց որոնք իրենց բարոյական եւ նիւթական օժանդակութիւնը բերած են միուլթեանս:

Հ.Յ.Յ.Կ.Ա.-ի Թորոնթոյի Սասնաճիւղի Սիամեայ Բարոյական
Տեղեկագիր

1971 տարուայ ընթացքին գումարած ենք 32 վարչական հերթական նիստեր, 3 Հնդհ. Անդամական Ժողովներ եւ մէկ խառն ժողով ծիսական Խորհուրդի եւ Նոր Սերունդ ամսաթերթի խմբագրութեան հետ:

Ճեռնարկներ:-

- 1- Երիտ. պարանցիկ -- Վալընթայն Տէյի- առթիւ Փետ.12, 1971.
- 2- Եկեղեցական Համագումար - Օրարայի - մէջ Մարտ 19-21
- Վարչութիւնս եւ 23 անդամներէն ներկայ եղան:
- 3- Սասնակցեցանք Հ.Բ.Ը.Սիութեան եւ Հ.Մ.Ը.Սի Համիլթընի մէջ կազմակերպած "Կարէթ"-Պոլի մրցաշարքին:
- 4- Մարտ 28ին ցուցադրուեցաւ -Պարապաս- ի երկայն ժապաւէնը:
- 5- Ապրիլ 4ին կազմակերպեցինք Հ.Յ.Յ.Կ.Ա.ի օրուայ փառատօնը, ուր գործադրուեցաւ նաեւ գեղարուեստական յայտագիր. ներկայց. ,,Վարձու Սենեակ,, միարար թատերգութիւնը:
- 6- Մայիս 28ին տեղի ունեցաւ -Սարաթոն պարանցիկը-:
- 7- Յունիս 21ին Երիտ. պարանցիկ:
- 8-Ջրօսպտոյտ դէպի ՍիՊՈԼԴ ԲՕՈՆԹ 27 Յունիսին:
- 9-Հ.Յ.Յ.Կ.Ա.ի եւ Սիաց.Սահանգներու ներկայացուցիչներու հետ հանդիպում Յուլիս 5ին:
- 10- Օգոստոս 22ին Սիացեալ զրօսպտոյտ ,Մոնթրէալ-Թորոնթօ, մասնաճիւղերը դէպի քինկսթրն:
- 11- Օգոստոս 28ին ՀՅԵԿԱ.ի 25 ամեակի պարահանդէս Ջասա Լոմայի մէջ:
- 12 Եւրոպական Յնունդին առթիւ կազմակերպեցինք անդամական հաւաքոյթ եւ պարանցիկ 25 Դեկտ.1971ին:
- 13- Ամանորի ականդական Գարահանդէս Դեկտ.31ին:

Այս բոլոր ձեռնարկներուն կողքին Վարչութիւնս օժանդակած եւ քաջալեռած է ծիսական Խորհուրդի բոլոր ձեռնարկները:
Կազմակերպած ենք նաեւ Փինկ-Փոնկի եւ Պոլիսկի մրցաշարք:

Վարչութիւնս շնորհակալութիւն կը յայտնէ ծիսական Խորհուրդին իրենց տարած հրգատարութեան համար հանդէպ Սիութեանս: